

**ՀՀ-ՈՒՄ ԿԱԹԻ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐԺԵՇՂԹԱՅՈՒՄ ԱՌԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

<https://doi.org/10.59982/18294359-24.2-ha-04>

Աշոտ Երջանիկի Ոսկանյան

տ. գ. թ., դոցենտ

ՀԱԱՀ, Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն ashot.voskan@gmail.com

Վարինե Պետրոսի Մնացականյան

տ. գ. թ.,

ՀԱԱՀ, Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն karine.mnacakanyan.1984@mail.ru

Մարգո Վարդանի Ղազարյան

ՀԱԱՀ, Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն mag198824@rambler.ru

Անփոփագիր

Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտը բնութագրող ցուցանիշների կայունությունը պայմանավորված է առաջնային արտադրական միավորների մրցունակությունից և արտադրական գործընթացների կազմակերպման արդյունավետությունից, ինչպես նաև գյուղատնտեսության առանձնահատկություններից, որոնք սահմանափակում են ճյուղի մրցունակության հնարավորությունները, ինչն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում առաջնային արտադրական միավորների մրցունակության և դրա բարձրացման վրա:

Հոդվածի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կաթի և կաթնամթերքի արժեզրթայի վերլուծությամբ՝ վեր հանել առաջնային արտադրական միավորների տեղն ու դերը՝ հիմնավորելով միջոցառումների համալիր մոտեցումների անհրաժեշտությունից և մրցունակության բարձրացումից: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ վերլուծել կաթի արտադրության արժեզրթան, դրանում հիմնական դերակատարների գործունեությունը, ինչպես նաև արժեզրթայի արտադրության օղակում առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Առաջնային արտադրական միավորների մրցունակության ապահովումը ենթադրում է հիմնական խնդիրների վերհանում, տարբերակում և լուծման ուղիների

առաջադրում, դրանով էլ պայմանավորված որպես ուսումնասիրման առարկա է դիտարկվել կաթի և կաթնամթերքի արժեչրթան: Ընդ որում, արժեչրթայում գյուղացիական տնտեսությունների դերի արժևորումը և սպասվելիք եկամուտների մակարդակի համապատասխանեցումն ու կայունացումը շարունակվում են մնալ օրակարգային հարցեր: Ուստի՝ հատկապես կարևորվում է «Կաթի գնման գործընթացի կարգավորման» մասին ՀՀ օրենքի մշակումն ու ընդունումը, որի շրջանակներում կնախատեսվի համապատասխան լիազորություններով օժտված մշտական ներկայացուցչական հանձնաժողով՝ իր համապատասխան գործառույթներով:

Հիմնարատեր: Կաթ, կաթնամթերք, արժեչրթա, գյուղացիական տնտեսություններ, մրցունակություն, դասակարգում:

Ներածություն

ՀՀ-ում պարենային անվտանգության ապահովման համակարգը գործում է անարդյունավետ, որը մեծապես կախված է արժեչրթաներում ներառված ենթակառուցվածքների ու օղակների ոչ համակարգված գործելակերպից: Գյուղատնտեսական արտադրանքի արժեչրթայում առաջնային արտադրական միավորների դերի արժևորումը մնում է որպես առաջնային:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտական աբստրակցիայի, ինդուկցիայի և դեդուկցիայի, վերլուծության մեթոդները: Տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկագրերն ու հրապարակումները, տարբեր գիտական հանդեսներում հրատարակված համապատասխան նյութերը:

Որպես հետազոտության արդյունք, ներկայացվում են կաթի և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող առաջնային արտադրական միավորների խմբային դասակարգումը, խմբերում արտադրատնտեսական մի քանի ցուցանիշների ներկայացումը, կաթի և կաթնամթերքի արժեչրթայի արդյունավետ գործունեությունն ապահովող մշտական ներկայացուցչական հանձնաժողովի ստեղծումը, որը կրերի գործարար միջավայրի բարելավմանն ու տնտեսությունների մրցունակության բարձրացմանը:

ՀՀ-ում **կաթի և կաթնամթերքի** կայուն արժեչրթայի առկայությամբ և ներառված սուբյեկտների փոխլրացնող գործելակերպով է պայմանավորված պարենային ու տնտեսական անվտանգությունը: Կաթի ինքնաբավարության մակարդակը բարձր է (83.4%), սակայն վերջին տարիներին գյուղացիական տնտեսություններում կրճատման միտում է նկատվում ինչպես անասնազվաքանակի, այնպես էլ արտադրության ծավալների (Տե՛ս, Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

	Չափ. միավոր	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
ԽԵԱ գլխաքանակ, այդ թվում	Հազ. գլուխ	585,6	566,9	574,8	608,4	555,0
Կովեր	Հազ.գլուխ	264,5	251,9	249,6	263,5	244,1
Կաթ	Հազ.տոննա	751,8	690,4	660,8	646,4	663,2
Ինքնաբավության մակարդակ	Տոկոս	86,8	84,3	82,0	87,7	83,4
Ապրանքայնության մակարդակ	Տոկոս	62,0	60,4	59,7	64,4	64,5

Գյուղացիական տնտեսությունների արտադրատնտեսական մի քանի ցուցանիշներ
[ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն],
[ՀՀ ՎԿ, Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը]

Հանրապետության գյուղացիական տնտեսություններում 2022թ. 2018թ. նկատմամբ ԽԵԱ-ի գլխաքանակը կրճատվել է 5.2%-ով (կովերի գլխաքանակը՝ 7.7%-ով), որի արդյունքում էլ կրճատվել են նաև կաթի արտադրության ծավալները 11.7%-ով: Նույն ժամանակահատվածի կտրվածքով կաթի ինքնաբավության մակարդակը կրճատվել է 3.4%, իսկ ապրանքայնության մակարդակն ավելացել 2.5 տոկոսային կետով:

ՀՀ-ում կաթի և կաթնամթերքի արժեչղթայի հիմնական դերակատարներն են արտադրության միջոցների մատակարարները, կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները (C, C+, B, A, A+ խմբերում գործունեություն ծավալող¹), առևտրային կազմակերպությունները, վերամշակող ընկերությունները, հավաքման կետերը (միջնորդներ), ներմուծմամբ և արտահամամբ զբաղվող սուբյեկտները, վաճառողներն ու սպառողները:

¹ Ըստ «Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների դասակարգման» գիտամեթոդական ցուցումների ՀՀ-ում կաթի, կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող շուրջ 100,8 հազ. (ՀՀ 2014թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների համաձայն) գյուղացիական տնտեսությունները դասակարգվել են C, C+, B, A, A+ խմբերում՝ հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունները բնութագրող 7 ցուցանիշները:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

հեռացումը, կերակրումը, ջրամատակարարումն իրականացվում է ավտոմատացված եղանակով:²

Կաթի արտադրությամբ զբաղվող C և C+ խմբերում գործունեություն ծավալող գյուղացիական տնտեսությունների 1 գլխի հաշվով զուտ եկամուտը 2022թ. 2020թ. նկատմամբ ավելացել է 51.7, B խմբի գյուղացիական տնտեսություններում՝ 70.3, իսկ A և A+ խմբերի գյուղացիական տնտեսություններում՝ 66.9%-ով (Տե'ս, Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Հ/Հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	2020թ.	2021թ.	2022թ.
C և C+ խմբեր					
1.	Միջին կաթնատվությունը	կգ	1800	1850	1900
2.	1 կգ իրացման գինը	դրամ	148,00	155,00	196,00
3.	Արտադրանքի ինքնարժեքը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	212.0	240.2	289.9
4.	Զուտ եկամուտը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	54.4	46.6	82.5
5.	Շահութաբերության մակարդակը	%	25,64	19,39	28,47
B խումբ					
6.	Միջին կաթնատվությունը	կգ	2398	2435	2467
7.	1 կգ իրացման գինը	դրամ	148	155	196
8.	Արտադրանքի ինքնարժեքը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	250.2	283.9	305.2
9.	Զուտ եկամուտը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	104.7	93.5	178.3
10.	Շահութաբերության մակարդակը	%	41,86	32,91	58,41
A և A+ խմբեր					
11.	Միջին կաթնատվությունը	կգ	3500	3537	3570
12.	1 կգ իրացման գինը	դրամ	148	155	196
13.	Արտադրանքի ինքնարժեքը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	351.9	374.9	422.4
14.	Զուտ եկամուտը 1 գլխի հաշվով	հազ. դրամ	166.1	176.3	277.3
15.	Շահութաբերության մակարդակը	%	47.2	47,39	65,64

Կաթի արտադրությամբ զբաղվող C, C+, B, A, A+ խմբերի գյուղացիական տնտեսությունների գործունեության տնտեսական մի քանի ցուցանիշներ (2020-2022թթ.)
[ՀՀ ՎԿ, Պարենային սպահովություն և աղքատություն]

² Նշված տնտեսություններն ունենան նաև ջրախմբ (անհատական կամ խմբային տաքացվող), քամհար, լուսավորության լամպեր, կովերի հանգստի տեղերում նախատեսված ռեզինե մատրասներ, կթի հարթակի համար արևային ջրատաքացուցիչ, պաղեցման տարողություն և այլն:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել կաթի արտադրությամբ զբաղվող C և C+ խմբերում ներառված տնտեսությունների շահութաբերության ցածր մակարդակը պայմանավորված է եղել ըստ պահանջի կերատեսակների չօգտագործմամբ և վերամշակող կազմակերպությունների կողմից առաջարկվող կաթի գներով: Մասնավորապես՝ ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների կաթնային հոտ ունեցող տնտեսությունները կազմել են 100.8 հազ.: Ըստ ներկայացված դասակարգման C խմբում 68.5 հազ. (67,8%), C+ խմբում՝ 18.9 հազ. (18,7%), B խմբում՝ 9.3 հազ. (9,2%), A խմբում՝ 3.9 հազ. (3,9%), A+ խմբում՝ 155 տնտեսություն (0.4%): Հանրապետությունում առկա են գյուղացիական տնտեսությունների շահերը ներկայացնող 2 կառույց կամ միություն՝ «Կաթնամթերքի արտադրողների միությունը», որը ներկայումս ժամանակավորապես դադարեցրել է իր գործունեությունը և «Պանրի արտադրողների միությունը», որը փոքր կառույց է, ունի ընդամենը 15 աշխատող և զբաղվում է միայն պանրագործության ոլորտի զարգացմամբ և բանակցություններ չի վարում վերամշակող կազմակերպությունների հետ կաթի գնի ձևավորման հարցում: Պահպանման կարճ ժամանակահատվածի պատճառով տնտեսությունները ստիպված են լինում վաճառել վերամշակողների առաջարկած գներով, որն էլ նրանց տալիս է առավելություններ՝ հանդես գալու որպես գին թելադրողներ և ունենալու դիրքային առավելություններ: Արդյունքում տնտեսությունների հիմնական մասն արտադրված կաթի մի մասն օգտագործում են սեփական կարիքների համար, իսկ մնացածը՝ ոչ արտադրական, տնայնագործական եղանակով, արտադրելով փոքր ծավալների պանիր, մածուն, թարմ կաթի հետ իրացնում շուկայում:

Կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններում հիմնական խնդիրները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

Հ/Հ	C, C+ խմբերի տնտեսություններ	B խմբի տնտեսություններ	A, A+ խմբերի տնտեսություններ
1.	Որակյալ մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության պակաս, ինչպես նաև տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման սուղ հնարավորությունները	Որակյալ մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության պակասը	
2.	Վերպատրաստումներին և դասընթացներին մասնակցության դժվարությունները		
3.	Արտադրության կազմակերպման «խելացի» ագրոսարքավորումների դժվար հասանելիությունը, մատչելիությունը և գնային քաղաքականությունը		
4.	Ինտենսիվության ցածր մակարդակը		
5.	Իրացման գործընթացի դժվարությունները		Մթերման ցածր գինը
6.	Կաթի որակական հատկանիշները (ցածր յուղայնությունը)	Մասնագետների ներգրավման սուղ հնարավորություններ	

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

7.	Անասնակերի կերատեսակների հնարավորությունները	ռացիոնում ներառման	անհրաժեշտ սահմանափակ	
8.	Օգտագործվող անասնակերի դինամիկ աճող գները			
9.	Սահմանամերձ գոտիներում արոտների անարդյունավետ օգտագործումը և արոտային պահվածքը			
10.	Տեխնիկա ձեռք բերելու սուղ հնարավորություն			
11.	Տնտեսությունների փոքր չափերը կամ տնտեսություններում քիչ անասնազխաքանակը			Պայմանագրային հարաբերու- թյունների անկատարությունը
12.	Անասունների ցածր գենային հատկանիշները			
13.	Ֆինանսական միջոցների սղությունն ու անհասանելիությունը			
14.	Մասնագիտական կադրերի սղություն			

***Կաթի արտադրությամբ զբաղվող տնտեսություններում հիմնական խնդիրներն
ըստ առաջարկվող խմբերի***

Կաթի և կաթնամթերքի արժեշտային երկրորդ օղակն արտադրության վերամշակման փուլն է: Այս օղակում վերամշակող ձեռնարկությունները կաթը ձեռք են բերում մեծ և փոքր գյուղացիական տնտեսություններից, կաթնամթերք արտադրողների կողմից ստեղծված կաթի մթերման կետերից, միջնորդ կազմակերպություններից կամ ֆիզիկական անձանցից, որոնք կաթը հավաքում են տնտեսություններից: Մասնավորապես, ըստ հասանելի տեղեկատվության, 2017-2025թթ. վերամշակող կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների միջև կնքվել են շուրջ 3802 պայմանագիր, որից փաստացի 2017-2023թթ գնվել է շուրջ 1063.1 հազ. տոննա կաթ:

Արժեշտային այս օղակում հայտվել են նոր դերակատարներ, որոնք վերամշակող կազմակերպություններին մատակարարում են կաթի փոշի (շուրջ 48 տնտեսվարող), որի հիմնական մասը ներմուծվում է տարբեր երկրներից (Բելառուսի Հանրապետություն, Իրանի Իսլամական Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա): Ներմուծվող և արտահանվող կաթի (բոլոր տեսակների) ծավալները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

	Արտահանում			Ներմուծում		
	2020թ.	2021թ.	2022թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Կաթ և սերուցք	37,20	-	16,23	1427,21	2794,4	10959,6

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Խտացրած կաթ, կաթի փոշի	28,84	27,81	39,20	7994,51	19171,47	35949,59
Սերուցք, մածուն, թթվասեր, թան	823,56	799,93	489,30	3468,54	4329,42	4750,12
Կաթնային շիճուկ	19,995	-	-	472,85	1215,48	552,72
Կարագ և այլ կաթնային յուղեր	51,57	170,77	2980,70	4575,34	2590,45	4291,33
Պանիր, կաթնաշոռ	2907,6	3091,81	1879,33	1521,35	1782,75	2636,35

***Կաթի (բոլոր տեսակների) արտահանման և ներմուծման ծավալները 2018-2022թ. տոննա
[ՀՀ ՎԿ, ՀՀ արտաքին առևտուրը (ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության
ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման)]***

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ հանրապետությունից արտահանված կաթի և սերուցքի ծավալները 2022թ. 2020թ. համեմատ կրճատվել են 43.6, իսկ խտացրած կաթի և կաթի փոշու ծավալներն ավելացել՝ 35.9 տոկոսներով: Մեծ ծավալներով ավելացել է կարագի և այլ կաթնային յուղերի արտահանման ծավալները, իսկ կաթնային շիճուկի արտահանում չի եղել³: Պանրի և կաթնաշոռի արտահանման ծավալները նույն ժամանակահատվածի կտրվածքով կրճատվել է 35.4, սերուցքի, մածունի, թթվասերի և թանի ծավալները՝ 59.4 տոկոսով: Մինչև նույն ժամանակ կաթնային շիճուկի ներմուծման ծավալներն աճել են 16.9, պանրի, կաթնաշոռի ծավալները՝ 73.3 տոկոսներով: Չնչին ծավալով նվազել է կարագի և այլ կաթնային յուղերի ներմուծման ծավալները (6.2 տոկոս):

Կաթի և սերուցքի ներմուծման ծավալները 2022թ. 2020թ. նկատմամբ ավելացել է 9.5 հազարով, իսկ խտացրած կաթի և կաթի փոշու ծավալներն 27.9 հազ. տոննայով: Ավելացել են նաև մնացած կաթնամթերքների ներմուծման ծավալները:

Ըստ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տվյալների ՀՀ-ի տարբեր մարզերում գործում են շուրջ 73 մեծ և փոքր կաթի վերամշակման ձեռնարկություններ և շուրջ 300 կաթ մթերող ընկերություններ [ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ]: Չնայած արտադրվող կաթի և կաթնամթերքի աճի բարձր տեմպի և շուկայի զարգացվածության մակարդակի, կաթի զգալի մասը ներմուծվում է արտերկրից՝ 22234.0 տոննա (բոլոր տեսակի):

Այսպիսով, կաթի արժեզրայի երկրորդ օղակում հիմնախնդիր են կաթի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների և վերամշակողների միջև թույլ արտադրատնտեսական փոխհարաբերությունները, այդ թվում են պայմանագրերի

³ Ներմուծված կաթնային շիճուկի և խտացրած սերուցքի (Իրանի Իսլամական Հանրապետությունից) վերամշակումից ստացած կարագն ինչպես օգտագործվում է ներքին շուկայում, այնպես էլ արտահանվում է հանրապետությունից:

անկատարությունը, տեղափոխման ժամանակացույցը, որոնք հիմնականում պայմանավորված են գնման գների շուրջ անհամաձայնություններով, կաթի երաշխավորված ծավալի և որակի անհամապատասխանությամբ և այլն:

Եզրակացություն

ՀՀ կաթի և կաթնամթերքի արժեշղթայում գյուղացիական տնտեսությունների արտադրանքի գների կարգավորման, արտադրատնտեսական ցուցանիշների բարելավման, կաթի ձեռք բերման պայմանագրերի օրինակելի ձևի և բազիսային գների սահմանման, մթերման քանակների և գնագոյացման կառուցակարգերի հստակեցման նպատակով անհրաժեշտ է մշակել և ընդունել «Կաթի գնման գործընթացի կարգավորման» մասին ՀՀ օրենք, որի շրջանակներում կնախատեսվի համապատասխան լիազորություններով օժտված մշտական ներկայացուցչական հանձնաժողով, որի անդամներ կարող են լինել կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները (մասնակիցների 20%), գյուղացիական տնտեսությունները (մասնակիցների 40%՝ բոլոր գյուղական համայնքներից ընդգրկված) և վերամշակող կազմակերպությունները (մասնակիցների 40%): Մշտական ներկայացուցչական հանձնաժողովը կարող է իրականացնել հետևյալ գործառույթները.

1. ***Շուկայի վերլուծություն և վերահսկողություն*** - հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա հունվար ամսից կիրականացնի կաթի շուկայի պարբերական վերլուծություն, որը հնարավորություն կտա տեղեկանալու շուկայական իրավիճակի, գների, արտադրության և ներմուծման ծավալների, «գյուղացիական տնտեսություն - վերամշակող կազմակերպություն» կնքված պայմանագրերի մասին: Տարվա ընթացքում պարբերաբար կիրականացնի պայմանագրերի կատարման վերահսկողություն:

2. ***Տեղեկատվության ապահովում*** - պարբերաբար համայնքներում իրականացնել տեղեկատվական հանդիպումներ, որոնց ժամանակ կտրվեն շուկայի ուսումնասիրության արդյունքներն ու կաթի քվոտայի առկայության մասին տեղեկատվություն բոլոր հասանելի միջոցներով՝ շուկայում փոփոխությունների, միտումների, գների, դրանց փոփոխությունների և այլնի վերաբերյալ, ինչպես նաև սեզոնային անհամամասնությունների ընթացքում առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը:

3. ***Գնման գների կարգավորում*** - արտադրության ինքնարժեքի և կաթի շուկայական գների համեմատական վերլուծությամբ կսահմանվի կաթի նպատակային գին, որը գյուղացիական տնտեսություններին կապահովի ինքնաֆինանսավորման և գործունեության ընդլայնման հնարավորություններով: Տարվա ընթացքում գյուղացիական տնտեսություններն ազատ են իրենց արտադրանքի տնօրինման հարցում և այն կարող են վաճառել շուկայական գներով, որոնք հնարավոր է լինեն երաշխավորված գնից բարձր, ցածր կամ հավասար: Իրացման գինը, նպատակային գնից ցածր լինելու դեպքում, գյուղացիական տնտեսությունը կստանա փոխհատուցում

(ելնելով գների տարբերությունից) յուրաքանչյուր տարի պետական բյուջեից հանձնաժողովին հատկացված ֆինանսական միջոցների չափով: Վերամշակող ընկերությունների կաթի գնման դեպքում, եթե նպատակային գինն ավելի ցածր լինի, քան իրացմանը, ապա վերամշակողը տարբերության չափը կփոխանցի հանձնաժողովի բյուջե:

Քվոտաների սահմանում - հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա հունվար ամսին կներկայացնի կաթի երաշխավորված իրացման քվոտաներ, որոնք կտրվեն գյուղացիական տնտեսություններին համապատասխան դիմում ներկայացնելուց հետո: ՀՀ-ում, ընդհանուր առմամբ, 2022թ. արտադրվել է 663,2 հազ. տոննա կաթ, գյուղացիական տնտեսությունների կողմից իրացվել է 62,1%-ը, որի շուրջ 95%-ը գնվել է վերամշակող կազմակերպությունների կողմից: Ոստի քվոտայով նշված ծավալի կաթը կիրացվի վերամշակող ընկերություններում: Կաթի մատակարարում չիրականացնելու դեպքում կվճարի տույժեր: Գյուղացիական տնտեսությունը հնարավորություն կունենա տարվա ընթացքում քվոտայում նշված ծավալի կաթի չապահովման դեպքում, պատճառը ներկայացնելուց հետո, այն հետ վերադարձնել հանձնաժողովին:

4. պայմանագրերի կնքում - ձեռք բերված քվոտաների համաձայն եռակողմ պայմանագրերի կնքում՝ գյուղացիական տնտեսություն-հանձնաժողով-վերամշակող կազմակերպություն, որտեղ հանձնաժողովը հանդես կգա որպես երաշխավոր:

Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների առջև ծառայած խնդիրների իրատեսական լուծումները հատկապես կնպաստեն գյուղացիական տնտեսությունների նորովի կայացմանը, ֆինանսական վիճակի կայունացմանը, բիզնես սկզբունքների կիրառմամբ ագրոբիզնեսի համակարգում նրանց տեղի և դերի ամրապնդմանը, գյուղատնտեսության զարգացման տարաբնույթ ծրագրերում մասնակցության երաշխավորմանը, դասակարգման քանակական և որակական չափորոշիչների ամրագրմանը, կրթական, խորհրդատվական, տեղեկատվական, բիզնես հմտությունների ձեռքբերմանը, պարենային արժեշտյաներում իրավունքների պաշտպանությանը, իրավական հարցերի իմացությանը, գյուղացիական տնտեսություններում հաշվառումների, գրանցումների վարմանը, վարկերից օգտվելուն և այլն: Աշխատանքում ներկայացված առաջարկություններն ազդեցություն կունենան գյուղացիական տնտեսություններում բիզնես մտածելակերպի և գործարար միջավայրի ձևավորմանը՝ բերելով մրցունակության բարձրացմանը:

Գրականության ցանկ

1. Ոսկանյան Ա. Ե., Մնացականյան Կ. Պ., Ղազարյան Մ.Վ. - Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների դասակարգման գիտամեթոդական ցուցումներ / - Եր.: ՀԱԱՀ, 2024, 48 էջ, (05.09.2024),

- https://library.anau.am/images/stories/grqer/metodakanner/2024/voskanyan_mnacakanyan_khazaryan.pdf
2. ՀՀ ՎԿ, Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2020թ., 2021թ., 2022թ., (05.09.2024) https://armstat.am/file/article/iracum_2020.pdf,
https://armstat.am/file/article/iracum__2021.pdf,
https://armstat.am/file/article/iracum_2022.pdf,
 3. ՀՀ ՎԿ, ՀՀ արտաքին առևտուրը (ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման) 2020թ., 2021թ., 2022թ. (05.09.2024), <https://armstat.am/am/?nid=778>
 4. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ., 2023թ., (05.09.2024), https://armstat.am/file/article/f_sec_4_2021_3.pdf,
https://armstat.am/file/article/f_sec_4_2023_3.pdf
 5. ՀՀ ՎԿ, 2014թ. Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում, (05.09.2024), <https://www.armstat.am/am/?nid=80&id=1860&fbclid=IwAR2SeHUtHEdQfiAEfzyDBBC1qp-ktwU7AS303NGjtUbNhX00TYfvYt0rdXc>
 6. ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, Երևան 2023, (05.09.2024), <https://armstat.am/file/doc/99541108.pdf>
 7. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ՝ (28.08.2024թ.), (05.09.2024), <https://mineconomy.am/>

**SOLVING PROBLEMS IN THE VALUE CHAIN OF MILK AND DAIRY PRODUCTS
IN RA AS A FACTOR OF INCREASING COMPETITIVENESS OF AGRICULTURAL FARMS**

Ashot Voskanyan

PhD in Economics, Associate Professor

ANAU, The Agrarian Policy and Economics Research Center,

ashot.voskan@gmail.com

Karine Mnatsakanyan

PhD in Economics,

ANAU, The Agrarian Policy and Economics Research Center,

karine.mnacakanyan.1984@mail.ru

Margo Ghazaryan

ANAU, The Agrarian Policy and Economics Research Center,

mag198824@rambler.ru

Abstract

The stability of the indicators characterizing the agricultural sector of the Republic of Armenia is due to the competitiveness of the main production units and the efficiency of the organization of production processes, as well as the characteristics of agriculture that limit the competitiveness of the industry, which in turn negatively affects the competitiveness of rural farms and its increase.

The purpose of the article is to, by analyzing the value chain of milk and dairy products in the Republic of Armenia, emphasize the place and role of primary production units, justifying the need for integrated approaches to measures and increasing competitiveness. To achieve this goal, the following tasks were set: to analyze the milk production value chain, the activities of the main participants in it, as well as existing problems in the production link of the value chain and ways to solve them.

Ensuring the competitiveness of rural farms involves identifying and highlighting the main problems and proposing solutions, therefore, the value chain of milk and dairy products was considered as the object of study. At the same time, assessing the role of agriculture in the value chain, as well as adjusting and stabilizing expected income levels, continue to be on the agenda. Therefore, the development and adoption of the "Law on Regulating the Milk Procurement Process" in the Republic of Armenia is particularly important, within the framework of which a permanent representative commission endowed with relevant powers and functions will be established.

Keywords: Milk, dairy products, value chain, agriculture, competitiveness, classification.

Ներկայացվել է՝ 25.09.2024թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 14.11.2024թ.